

Պ. Բեգիրյան

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այստեղ հայերեն բառերի ստուգաբանական վերլուծման մեր մոտեցումը նույնն է, ինչ որ արդեն շարագրված է մեր առաջին՝ «Հայերենի մի քանի բառերի ստուգաբանության շուրջը» վերնագրով հոդվածում¹։ Ուստի անմիջապես անցնում ենք բուն նյութին։

1. ՆՐԱՆ կամ ՆԵՐԱՆ կամ ՆՈՐԱՆ։ Այս բառի մասին պրոֆ. Հր. Աճառյանի «Արմատական բառարան»-ում ասված է. «Արարական մի բույս և նրա յուզը» (հ. 5, էջ 207)։

Այս բառերի (առանձնապես վերջին երկուսի) ձևը և իմաստը մեկ մղում են պնդելու, որ դրանք ծագում են արար. نورة nawra «(ծառի) ծաղկումը, ծաղիկը» || تانورة tanwira || نوره nawraha (նույն նշ.) բառից։ Սրանք էլ ծագում են արար. نور nawwara || أنار 'anara «ծաղկել, բողբոջել» արմատից։

Ավելի մանրամասն բացատրություն տալ այդ բառին՝ առայժմ զբավար է։

2. ՀԱԶԻՄԱԹ։ Բառի իմաստն է «մի տեսակ վնուկ» (մեկ անգամ գործածված Դ. Տաթևացու «Դիրք հարցմանց»-ում — հ. 4, էջ 17)։

Բառս պետք է հանդեցնել արար. حزمة huzma «կապ, հանգույց» բառին (որը գալիս է ح hazama «կապել, իրար կապել» բայից)։ Արար. բառի համապատասխան իմաստը չի վկայված արդի մի քանի բառարաններում։

Իմաստի դարգացման համար հմմտ. հյ. կապ «1. հանգույց. 2. (հնց.) կախարդանք, հմայություն»։ Նման իմաստափոխությունը կապված է անցյալում տարածված այն սնահամալսության հետ, երբ տարբեր դույնի թելեր իրար կապելուց հետո հանգույցների ձևերից դուշակություններ էին անում։ Բառի հնչյունական կողմի համար հմմտ. արարերենից փոխառյալ հետևյալ բառերը. սաղաւաթ «նվեր» (հ. 6, էջ 55), սարիւթ (հ. 6, էջ 139)։

¹ Տե՛ս ՀՍՍՐԻ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտ.), № 9, 1955, էջ 95—104։

² Փոխառյալ բառերի իմաստի երանգավորման նույն երևույթից հետևանքով կառելի է որոշակի կերպով ասել, որ այնպիսի բառեր, ինչպիսիք են ղիոկանդիղիմ «հողմեական մի աստիճան» (հ. 2, էջ 553), կանխսորայ «թագավորի զինակիրն ու կարապետը» (հ. 2, էջ 963), ղեմխտիսոս «պառզամալոր», անշուշտ լատիներենից կամ հունարենից են փոխառյալ. առաջին երկուսի մեջ նկատվում է լատ. candidus «սպիտակափայլ» բառը (որից է candidatus «սպիտակազգեստ պաշտոնյա». զրանցից երկրորդի հնչյունական կողմի համար հմմտ. պրոխեսորայ «թագավորի հուղարկավոր» հուն. προσηγορεύς), վերջինի մեջ՝ mittere «ուղարկել, առաքել» բայը։ Իսկ վերացական պաշտոնական մի աստիճան» (հ. 2, էջ 613—614) պետք է փոխառյալ լինի վրացերենից (այս մասին չի խոսում արդյոք այն, որ բառս մեկ անգամ միայն գործածված է Օրբելյանի մոտ)։ Եվ այլն։

3. ՈԼՈՒՄՆ, Սա հայտնի ընդեղենի տնուենն է. մինչև այժմ գտնվում է աստուգարանված բառերի շարքում (հ. 5, էջ 474—475):

Ոմանք (նշի, Հյուսթարպեյենտյան) այս բառը կցել են ոլոր արմատին, սակայն Աճառյանն այդ բացատրությունը համարել է անհավաստի: Հետազոտությունը ցույց է տալիս, որ առաջիններն իրավացի են:

Ըստ առարկաների արտաքին ձևի դուգորդման այո և մի շարք այլ ընդեղենների անվանումը Վլյուր, բոլոր՝ հասկացությունն արտահայտող արմատներով — եզակի է: Հմմտ.

Վիկն կամ վիգն Վալյրի ոլոռ, անասունների համար ուտելի խոտեղեն — գալիս է հնդեվր. uci-g- ժոռիլ, կորանալ՝ արմատից (նույնից է լո. vicia)¹:

Պատյալ > պուտուտակ ժախեռ, բրբ. զլուլ Վ1. ոլոռն. 2. քրտինքի մեծ կաթիլներ. 3. բրնձի մեջ գտնված կլոր անպետք հատիկներ²:

4. նույնպես էի կարելի իրրե առանձին արմատներ գնել ԿՏԻՏ Վսուղարկութուն, փնտրտուք՝ (որից՝ կտակել մանրազնին կերպով քննել, պրպտել, խուզարկել), մանրակալիտ սուցել մանրամասն քննել՝ (հ. 3, էջ 1461) և ԿՐԿԻՏ բառերը. վերջինիս իմաստն է «պրպտում, որոնում, փնտրտուք» (առանձին անգործածական), որից՝ կրկտել Վսուղարկել, կողոպտելու նպատակով որոնել, մանրակրկիտ, ականջակրկիտ ճականջ խառնելու գործիք և այլն (հ. 3, էջ 1474):

Այս երկու բառերի՝ ծագումով նույնը լինելը կարող է ապացուցել, թեկուզ, այն հանգամանքը, որ երկուսից էլ կաղավել են համանման բառեր՝ միևնույն իմաստով (մանրակալիտ և մանրակրկիտ):

Մյուս կողմից, այս բառերը պետք է կաղաված լինեն *կիտ արմատի կրկնությունյամբ, իրրե բազմապատկական կերպի բայեր (հմմտ. նրանց Վլընտըրտուք, որոնում, պրպտում՝ նշանակությունը):

Ձևի համար հմմտ. պտրել (պտուել) — պտրտել, պրպտել, փնտրել (փնտրել, փնդուել) — փնտրտել, կուտ — կտուտ (կտտանք) և այլն:

5. ԽՆԴԱԿԵԼ: Այս բառի մասին բառարանից իմանում ենք, որ նա նշանակում է ծեղեղել, և ունի միայն բառ. Նրեմ. (հ. 3, էջ 528):

Այս բառը կաղավում է խանդակ բառի հետ և ներկայացնում է նրա՝ փոխարեքական իմաստով օգտագործման դեպքը:

Հայտնի է, որ խանդակ արարելենից փոխառյալ բառ է և նշանակում է Վիոս (հատկապես պարիսպների առաջ փորված փոսր)³:

Այդ բառը հնում լայն գործածություն ուներ: Կա նաև բարբառներում, օր. ՀՃ. խանդոկ ժոռը, Մղր. խըրխանդակ (խոր-խանդակ) Վսորդուրդութուն⁴:

Խնդակել փաստորեն նշանակում է Վիոսին (նեղ տեղ) դեմ անել, նեղր գցել: Բմաստի դարգացման համար հմմտ. Ղրբ. խնդակել, խնդկի տալ Վ1. արագ վազել. 2. անառնոց խրտնելով փախչիլը՝ (!)⁵:

¹ Արմ. բառ., հատ. 6, էջ 670—671:

² Նույն տեղում, հատ. 5, էջ 1133—1134:

³ Արմ. բառ., հատ. 3, էջ 372—373: Արար. xandaq նշանակում է «խրամատ» և Վջրով լցված փոս: Վերջին իմաստը կաղաված է հնագույն ռազմական արվեստի հետ:

⁴ Է. Բ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 272:

⁵ Գվռ. բառ., էջ 475:

Հմատ. նաև խորշ փոռ, ծակ — խորշի զգլվել, դանել, իրեն հեռու պահել ևն»:

6. ԿԻԶ, Բառարանում այս բառի մասին ասված է. այն նշանակում է լսորոված. անստույգ բառ. մեկ անգամ ունի Զաքարիա Ծործորեցին (ՔՈՂ ուտի հաց առանց աղի և ոչ կիզ և ողջակէզ առանց հրոյ) (հ. 3, էջ 1178):

Այս բառը կարելի է հանգեցնել կէզ (այրել) արմատին, իրրե ճայրված» լսորոված»¹. Իմաստի զարգացման համար հմատ. խորովել ճայրել — խորոված զարակի վրա (հատուկ ձևով) եփած միս: Թերևս պատահական չէ, որ վերոհիշյալ կիզ բառը տեքստում օգտագործված է ողջակէզ բառի կողքին: Այստեղ կարող է սրոշ դեր խաղացած լինել նաև անալոգիան (խորոված բառի հետ): Իմաստի զարգացման համար հմատ. խառ լսորոված; համադամ — խաճրեալ ճայրված, եփված» (նույն արմատից է խոճարար): Չի կարելի, սակայն, չնշել, որ այս ստուգարանությունը հնչյունաբանական տեսակետից հետագա ճշտման կարիք ունի:

7. ՇԱՐԱԳՈՅՐ (բրբ. ձեք՝ շարագոյր): Բառիս բուն նշանակությունն է զգգալի վրա գցելու կանացի քող» (Մաղաքիա արեղայի մոտ): Ունի նաև զգրքի տուփ, կող կամ պատյան», զգրքը մեջը փաթաթելու շոր» իմաստները (հ. 5, էջ 294)². Աճառյանը սրան է կցում նաև շագոյր (պայուսակ) բառը՝ «կանանց գլխի թաշկինակ, գրքի պատյան կամ տուփ» իմաստով (հ. 5, էջ 219—220):

Այս բառը հանգում է պարսկերենից փոխառյալ հայերեն շար արմատին:

Շար նշանակում է թող, շղարշ, տյուլ, ընդլայնմամբ՝ բարակ տյուլե շապիկ: Պարսկերենում šar բառն ունի ճնուրբ տյուլ, ժանդուս, զոր կանայք արկանեն զգլխոջն իւրեանց, որմէ և բաղմիցս հանգերձ կաղմեն» (որից՝ šarīca Վրան առնելու ծածկույթ) իմաստ: Այդ նույն բառը ԶԹ. բրբ. (շոյ, շոր) ունի շղարշ» իմաստը, Չն. բրբ. (շար)՝ Վզի թաշկինակ, Սվ. (շար)՝ «կանանց ծածկած բարակ սավանը» (հ. 5, էջ 291):

Շարագոյր բառը մեր կողմից շար արմատին հանգեցնելը միանգամայն արդարանում է իմաստային զարգացման տեսակետից: Այս կապակցությամբ բնորոշ է, օրինակ՝ այն, որ պրս. ساز saie այժմ նշանակում է ճնդկական տիպի փաթթոց, խույր: Հմատ. նաև քող (կամ քոլ) ծածկույթ, երևալի ծածկույց — բարբառներում՝ ճարսի երեսի շղարշ» (հ. 6, 1500—1501):

Ինչ վերաբերում է բառիս —գոյր մասնիկին, ասյա առայժմ նրա ծագումն անհայտ է: Հնարավոր է ենթադրել, որ շարագոյր կաղմված լինի վարագոյր-ի նմանակությամբ՝ իմաստի սահմանակցության հիման վրա (վերջինս նույնպես ստուգարանված չէ):

8. ՆՈՒԱԳ, Աճառյանի մոտ բառս, ժանդամ, հեղ» նշանակությամբ³, գտնվում է ստուգարանված բառերի շարքում: Աճառյանը անհավանական ստուգարանությունների նեղ սյունակում նշում է.

¹ ՆՆԲ ունի. «Որպէս կիզեալ կամ խորովեալ ինչ» (հ. 1, էջ 1093): Աճառյանը չի հիշատակում սա:

² ՆՆԲ ունի. «Շար որպէս վարագոյր կամ շարիւ աղուցեալ պատիչ...» (հ. 2, էջ 468):

³ ՆՆԲ հիշատակում է նաև բառիս ժամ. պահ. չափ ժամանակի» իմաստները (հ. 2, էջ 447), մի բան, որ շատ օգտակար է նրա ստուգարանական վերլուծության համար:

ՇՀյունք. էջ 147 կցում է նախորդի (նուազ լեղանակ) բառի. — Պ. Բ.) հետ՝ նշանակությունը զարգացման համար համեմատելով եղանակ, որ նշանակում է թե՛ լեղանակ և թե՛ տարվա եղանակ (հ. 5, էջ 173—174):

Հյունքյարայեյենտյանը բոլորին է հայտնի իր մտացածին ստուգաբանություններով: Սակայն չի կարելի չընդունել, որ այս գեղարվեստական կոհնումը ճիշտ է:

Հիրավի, նուազ բառն իր վերոհիշյալ իմաստով կապվում է միջ. պահլավերենից փոխառյալ նուազ բառի հետ, որը նշանակում է ճնվագ, երգ, եղանակ¹:

Իմաստի զարգացման համար հմմտ.

Եղ || յեղ (հնդկ. qel-) զոյանալ, դառնալ — եղանակ || յեղանակ. 1. կերպ, ձև. 2. տարվա չորս բաժանումները. 3. նվագ — յեղ ժանգամ²:

Պհլ., պաղ. hangam ժամանակ, միջոց, տարվա եղանակները (պրս. hangam || angam ժամանակ, միջոց)³ > հյ. անգամ ժնեղ (հ. 1, էջ 293):

Պերճախոս ապացույց է բարբառային հանգ բառը.

Ղրբ. հանգ. լեղանակ, մանավանդ լավ եղանակ, Տփ. հանգով ասել (տաղը) լավ՝ գեղեցիկ եղանակով երգել — Երե., Ղրբ., Տփ. հանգ լեղանակ, ձև, տեսակ (որից՝ էն հանգի ժայնակես) — Երե. հանգ ժանգամ (!), օր. Յոթը հանգ քնեցին⁴:

9. ՕժԱՆԴԱԿ, ՎՊճԱԿԱՆ, նպաստող իմաստն ունեցող այս բառը նույնպես չի կարելի արմատական համարել: Այն հանգում է պահլավերենից փոխառյալ ոյժ (< ož, oյ ժուժ, զորություն) բառին, և դա պետք է նույնպես փոխառյալ համարել պհլ. մի անձանոթ ձևից:

Իմաստի զարգացման համար հմմտ. լտ. augeo ժաճել, մեծանալ, որը նույնարմատ է պհլ. վերոհիշյալ բառի, ինչպես նաև հյ. ան և օգն (!) բառերի հետ, լտ. auxilium (աճումն), սատար⁵, ռուս. мочь զորություն, հզորություն — помочь ժոհնել, могучий հզոր, զորեղ — помогать ժօգել, подмогнуть ժօժանդակել, գերմ. Starke ժուժ — Starkung ժամբացում, զորացում, զորավոր, օգնականություն, подкрепление:

Անդումբ տեղի է ունեցել ժուժ տալ իմաստի վրայով (հմմտ. զօրաւիգ = զօր — վիգ ժօհնություն, պաշտպանություն):

Ինչ վերաբերում է օժանդակ բառի վերջին՝ —անդակ մասին, ապա շատ համանական է, որ դա լինի պհլ. մի ածանց (կարկանդակ և սուրհանդակ չստուգաբանված բառերի մեջ այդ նույն ածանցը չէ՞. համեմատյալ գեղս ասպանդակ — պհլ. asp ժձի և —անդակ — բառը կարծես կասկած չի թողնում այդ հարցում):

10. ԿԻԻԹ, Բառիս նշանակությունն է գինու տակաճ (հ. 3, էջ 1390): Այն չի կարելի առանձին արմատ համարել, ինչպես այդ արված է բառարանում, այլ պետք է կապել կուք ժքաղ, խաղողաքաղ արմատի հետ (որի զուգահեռ ձևն է կիթ լեղելը):

Մեր այս պնդումն արդարացիում է հուն. τρυξ բառի նշանակությամբ:

¹ Տե՛ս Արմ. բառ., հատ. 5, էջ 171—172:

² Տե՛ս նույն տեղում, հատ. 2, էջ 683—684, հատ. 4, էջ 1278—1281:

³ Գլոս. բառ., էջ 636:

⁴ Տե՛ս Արմ. բառ., հատ. 1, էջ 172—173, հատ. 5, էջ 303—304:

ների քննությունը (Հովհաննու Սկեբերանի «Մեկնութիւն»-ում, որտեղ գործածված է կուք բառը նշված իմաստով, վերջինս օգտագործված է որպես թարգմանություն հունարեն հենց այդ բառի)։

Հուն. τρύξ (կամ τρυξ) նշանակում է գիծ (կամ ձեթի) տակաճք և ծագում է τρυγῶ (կամ τρυγῶ) բայից, որի իմաստներն են. «1. խողով հավաքել (!). 2. փեթակից մեղրը քաղել, հավաքել. 3. փխր. ժողովել, պլուկել, քամել, թալանել»։

Սրանից որոշակի երևում է, որ Սկեբերանը պարզապես պատճենել է հունարեն բառից և կուք օգտագործել համապատասխան նշանակությամբ։

11. ՄԱՏՆ։ Այս բառի տակ բառարանում ասված է. «Բլուր»։ Նորագյուտ բառ. արմատիս հնագույն գործածությունն է մատույց զգառիվեր»։ Բարբառներում. Լ. մատ, ՋԹ. մոզ Բլուր», Ջրս. մադ Ելեռան կող, լանջ» (հ. 4, էջ 875—876)։

Այս բառը կապվում է բուն հայկական մատ (հնգելիք. mad-) «մոտենալ, մոտ գնալ» արմատի հետ։ Այդ մասին է վկայում, թեկուզ, իր՝ Աճառյանի դիտողությունը այն մասին, որ «արմատիս հնագույն գործածությունն է մատույց զգառիվեր» (հմտ. մատույց-ի այժմյան իմաստի հետ)։

Իմաստի զարգացման համար հմտ.

Ռուս. подступать «մոտ գնալ» — подступы «փորվածքներ, խրամատներ, խոնգակներ, պեղաններ, որոնք պաշարողներին ծառայում են ամրացին մոտենալու համար», ֆր. approcher «մոտեցնել, մոտ բերել», s'approcher «մոտենալ» — approche «1. մերձեցում, մոտեցում. 2. հոգն. մատույց», գերմ. Zugang «մատույց» — zugänglich «մատչելի», Annaherungsweg «մատույց» — annähernd «մոտավորապես», Zugangsweg «մատույց» (բառացի՝ «մատույցի ճանապարհ»)։

Հայերենում էլ, տվյալ դեպքում, տեղի է ունեցել իմաստի համանման անցում։

12. ԽՈՐԾ կամ ԽՈՐԾԱԿ։ Այս բառի տակ բառարանում կարգում են ք. Բառիս հետ նույն է երևում երբ. xarīš «արևելյան հեղձուցիչ քամի» < երբ. xrs «կտրել. տաշել» = ասոր. xras «տաշանել» = արար. harf «հերկել, մշակել»։ «Արդյոք հայերեն բառը սեմական փոխառություն է, թե պատահական նմանություն ունի» (հ. 3, էջ 626—627)։

Քննությունը ցույց է տալիս, որ Աճառյանի վերջին ենթադրությունն է ճիշտ։ Բառս կապվում է բուն հայկական խար (հնգելիք. qer-, qor-, qf-) «այրել, գաղել» արմատի հետ, որի ցեղակից բառերն են խոր. խորով(ել), խարշ, և ներկայացնում է նրա մի ձայնդարձը։

Խորշակ սկզբնապես նշանակած պիտի լինի «այրող» (հմտ. բուժակ Բրուժող, գուշակ զգուշակող ևն), ճիշտ այնպես, ինչպես որ երբայեցեւրենում xarīš փաստորեն նշանակում է «կտրող, տաշող (քամի)»։ Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ մեր մատենագրության մեջ բառս հաճախակի օգտագործվել է նաև իրրե որոշիչ, ինչպես՝ հոգմ խորշակի, տապ խորշակի, խորշ քամի (տես ՆՆԲ, հ. 1, էջ 979—980)։

Իմաստի զարգացման տեսակետից ուշագրավ են վրացերենի (հայերենից) փոխառյալ բառերի նշանակությունները. խորշա, խորշակի, խվորշակի, խուարշակի «հեղձուցիչ տաքություն», խվորշակովանի «սաստիկ՝ կի-

գիշ(1)՝ հեղձուցիչ տաք» (թուշ. խորշա զջերմ, տենդա¹)։ Բնորոշն այստեղ հենց այն է, որ ամենուրեք գերիշխում է բառիս «տաք» այրող իմաստը։ Հմմտ. նաև լեթթ. (հայ. հետ նույնարմատ) karsei ժիրակ վառել, տաքացնել, karstit «տաքացնել» — karsts ժիրիչ, տաք, լիտվ. karsztas «տաք»², ռուս. зной «տապ» — знойный ветер «խորշակ» (բառացի՝ «տոթ քամի»), жарить «խորովել, տապակել» — жара «տոթ», Մն. բրբ. այրուկ ժիրիչ, սաստիկ տաք»³, անգլ. hot, գերմ. hitze «1. տաք. 2. տոթ», գերմ. hitziges Wind «խորշակ», արար. 𐎠𐎡𐎢𐎣 lafaha «1. այրել. 2. տոթ անել»։

Հնգելիք. *tep- «տաքանալ» — սիր. tap, tapati «այրել, տաքացնել» բառերի հետ նույնարմատ են իրան. tap «տաք, ջերմ» — պհլ. tap (նույն նշ.) > հյ. տապ «տաքություն, ջերմություն», պհլ. tapak > հյ. տապակ «տապակելու աման», պհլ. *taft > հյ. տոթ «սաստիկ տաք»⁴։ Այս ամբողջի համագրումը պարզ կերպով ցույց է տալիս իմաստային անցումը «այրել»-ից մինչև «տոթ»-ը (այրող օդ)։

13. Հեթ, Բառիս իմաստն է «անվի շրջանակը»։ Նրա հետ են կապվում. Բլ. հեգ, Մշ. հեծ «անվի մարմինը կաղմոգ երեք տաստակներից առաջինն ու վերջինը», Սլմ. խեց «անվի վայտե շրջանակը, որի վրա ամրացած են շառավիղները» (հ. 4, էջ 285)⁵։

Այս բոլորի մեջ ակնբախ է հենվելու, նեցուկ լինելու, ամրացվելու գաղափարը, մի հանգամանք, որ մղում է այդ բառը կապելու յեճուլ բայի հետ (վերջինիս կատարյալի հիմքը)։ Ուշագրավ է այն, որ յեճուլ բայը պարունակում է նեցուկ լինելու, ամրանալու գաղափարը։ Հմմտ. յեճուլ «հենվել, կոթնել, փխր. ապավինել» — յեց «ապավինած, ապաստանած», «ամուր, հաստատուն» (!), որից յեցամիտ «հաստատամիտ»։ Ինքը. նեցուկ բառն էլ կաղմված է յեցուկ-ից՝ նի- մասնիկով⁶։

Ինչ վերաբերում է հ-յ հնչյունական հարաբերության, ապա այդ առթիվ հմմտ. հաւ || յաւ, հիւց || յիսուց, հայր || յօրայ, հետ || յետ և այլն⁷։

14. Հեծ՝Ան։ Այս բառի նշանակություններն են. «ծառի բուն», «առաստաղի գերան», «բիր, ծեծելու վայտ», «խաչի գավաղանը»։ Նրա հետ են կապվում. միահեծան «խշտանական մեկ գավաղանի տակ», Սվ. հիճճուց «հաստ գերան» (հ. 4, էջ 237—239⁸, Արբ. Ուծան «հաստ գերան» (Դվո. բառ., էջ 654)։

Ինչպես երևում է, այս բառի էլ հիմնական իմաստների մեջ պարզ կերպով իրեն զգալ է տալիս հենվելու գաղափարը։ Եվ ելնելով դրանից, կարելի է բառս կապել բուն հայկական հեծ || նիստ (հնգելիք. sed- «նստել») արմատի հետ (դրան դումարած — ան վերջածանցը)։

Իմաստի զարգացման տեսակետից բնորոշ է, որ նստել (նստեցնել) նույնպես որոշ կապակցություններում օգտագործվում է «ճնշել» (հնց.)։

¹ Արմ. բառ., հատ. 3, էջ 637։

² Նույն տեղում, հատ. 3, էջ 397—398։

³ Գվո. բառ., էջ 93։

⁴ Արմ. բառ., հատ. 6, էջ 781—782, 784—785, 1022։

⁵ ՆՀԲ ունի՝ լծ. յեց—հատ. 2, էջ 95։

⁶ Տես Արմ. բառ., հատ. 4, էջ 1285։

⁷ Նույն տեղում, հատ. 4, էջ 1266։

⁸ ՆՀԲ ունի՝ լծ. հյ. ծեծ. և հեծանել. յեցուկ. նեցուկ—հատ. 2, էջ 81։

«հենել, տեղավորել, հարմարեցնել» իմաստներով: Հմմտ. նաև հուն. *καθίστα* «հաստեցնել» — *καθιστός* նստուկ — *καθιστώ* «հորինել, հաստել»: Ուշագրավ է նաև այն, որ ֆիզիկայի մեջ հեծան կոչվում է այն ձողը, որը հենվում է մի ուրիշ իրի վրա, իսկ ինքն էլ իր հերթին ծառայում է իրրե նեցուկ (ռուս. *балка*):

15. Ճի՛իւ: Արմատիս հիմնական նշանակութունն է «ծառի ոստ» (սրանից էլ սերում են զանազան փոխարերական իմաստներ ու առումներ): Նրա հետ ցեղակից են. նեղ-նեղեալ ժյուղ-ճյուղ բաժանված, նեղան ժյուղեր, նիղ-նիղեալ մասերի բաժանել, նեղացմամբ՝ լայն, թուղթը, փայտը են մասերի բաժանել, նիղալոր ժյուղ-ճյուղ, նեղք, նողք, նողնողել մաս-դերը փետել, նողքել ժաշքշելով ըզկտել, փետել, Ղրբ. նեղ պատռվածք, նեղնը «ճյուղ» (հ. 4, էջ 682):

Արմատիս ընդհանուր իմաստն է պատռելով իրարից բաժանել (հ. 4, էջ 656): Բարբառներում. Հմշ. նուխք ժհաստ ճյուղ, նյուրիկ ճնորածիլ, ճյուղ¹, Հճ. ջըղլաղել պատռելով երկուսի բաժանել, ջըղնել մարխը կտորների բաժանել (տե՛ս նաև հաջորդ բառի տակ բերվող օրինակները):

Հմմտ. ռուս. *бетвь* «ճյուղ» — *бетвнться* «1. ճյուղավորվել, ճյուղեր արձակել. 2. (հղվդ.) ճյուղավորվել, մասերի բաժանվել»²:

Աճառյանն իրավացիորեն ենթադրում էր, որ սա նույնն է ծիլ բառի հետ (հ. 3, էջ 768)³: Նրա այս ենթադրությունը հաստատվում է իմաստա-փոխության մի քանի դուգահեռներով:

Հայտնի է, որ ծիլ նշանակում է զլխավորապես շրնճյուղ. բողբոջ ծղոտ: Նրա ցեղակից ձևերն են ծիղ, ծիւղ (խոխլ), ծիւ (քակոր), ծեղ, ծղոտ⁴ Քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ այս բառն էլ ունի բաժան-վել իմաստի երանգ: Հմմտ. բրբ. ծղան, որը, Աճառյանի վկայու-թյամբ (Գլո. բառ., էջ 770), շերտ» իմաստով հիշված է Երեմ. բառարա-նում, Ղրբ. ծիվ ծիվ պատառ-պատառ, ծվեն-ծվեն, Խրբ. ծիվ լկտր» (Գլո. բառ., էջ 516), ծուատել, ծուէն:

Ղրբ. Տեղովը ծիլ ծիլ (կտոր-կտոր) ոսկի էլ դառնա... շինչ էլ որ լինի, ինչքան էլ երևելի մի բան լինի...», Երև. ծիլինգ ծիլինգ || ծլանգ շորի պա-տռված կտոր, ծվենք», Տփ. լկտոր, մասս, Ղրբ. ժսխի, ձմերուկի, վա-րունգի, խնձորի փոքր կտոր, շղարջին բարակը» (Գլո. բառ., էջ 513 և 516):

Ինձ «բողբոջ, ծիւ» -ընձլիլ (աընդհանուր աղբյուրից բաժանվել իմաս-տից) ժձագել, բխել, ժձել, բուսնել, ըձլիլ լույս ցուլալ⁵, ճառագայթել, փայլել» (վերջինիս համար հմմտ. շառաւիղ ժճյուղ, ոստ, ճառագայթ)»⁶:

Մնում է պարզել ծ>ն հնչյունափոխության հարցը:

Ճիշտ է, հայերենում քիչ են ծ>ն հնչյունափոխության դեպքեր (չը-հաշված առնմանության փաստերը), բայց և այնպես հման հնչյունափո-խության միջոցով մի արմատի դուգահեռ ձևերի առաջացումը եղակի երե-

¹ Հր. Աճառյան, Քննություն Հմշ. բրբ., Երևան, 1947, էջ 262:

² Քուղ-հայերեն բառարան, հ. 1, Երևան, 1954, էջ 155:

³ ՆՀԲ ունի՝ լձ. բնդ ծիղ. ծեղ. շիղ. բնձիւղ» (հ. 2, էջ 181):

⁴ Մղբ. ծուղ «ճյուղ» (Լ. Մ. Աղայան, Մեղրու բրբ., էջ 306):

⁵ Հմմտ. ցիլել «բաժանել» — ցուլալ:

⁶ ՏԷՍ Արմ. բառ., հատ. 2, էջ 1059—1060:

վույթ չէ: Հմմտ.: թեկուզ, մոծիր (մոխիր, ածուխի փշրանք), մծիր || մոնիր, մնիր (հ. 4, էջ 1102—1103):

Մ>ն հնչյունափոխություններ ավելի շատ պատահում է մի կողմից հայերենը, մյուս կողմից՝ կովկասյան լեզուները (հատկապես վրացերենը) իրար հետ կապող մի քանի բառերի մեջ, ինչպես՝ ծիրան>վր. նեռամի, թուշ. ներամ, արխազ. ախարամ: Վր. ծիրանի>հ. նիպու, վր. ծուլու (քիթի)>նկոյր¹ և այլն:

16. Ճի՛հ: Այս բառը նշանակում է գոտք, կենդանիների թաթ, սմբակ և տարածված է հատկապես մեր բարբառներում (հ. 4, էջ 653—654):

Այն պետք է կապել նախորդի հետ:

Ճիւ նույնպես պահպանում է նախնական՝ բրածանվել իմաստը: Հմմտ. Հմշ. նիվ ձծառի երկրորդական բարակ ճյուղ» (1), նիվ-նիվ անել «պատահողություն», Հնդ. նիւ, չիւ ճճյուղ»², Երև. նիվ նիվ անել «մարմինը կտոր-կտոր անել, հոշոտել», Շլ. նիվը նիվեն հանել «կտոր-կտոր անել»³:

Մուսաթել «հոշոտել» բառի կողքին ունենք նաև *նուսաթել || նվաթել «հավի ոտքերից քաշելով պատռել, փետրատել» (նուսաթան անել «հոշոտել»):

«Բրածանել» իմաստն արմատապահպանել է նաև բառարարդություններում: Հմմտ. երկանիւ «կճղակարաշիւ», մենանիւ «միակճղակ»:

Բառի՝ նախապես «բրածանել» իմաստ ունենալու մասին է վկայում նաև այն, որ նիւ ունեցել է ոչ միայն գոտք, այլև «թև» (մարդու կամ կենդանու) — հավ ու նիվ (չիփին.), Լեն. Ճվերդ կպնկեմ (սպառնալիք մանուկներին) — և նույնիսկ «ցայլք, աճուկ» (բոլորն էլ մարմնից բրածանվող» անդամներ) իմաստները:

Բմաստի նման զարգացման պերճախոս ապացույց է ծղի կամ ծղիկ բառը (ծիլ արմատից), որը նշանակում է թև գոտք և թև «բազուկ, թև» (նաև ձողոտից հյուսած զամբյուղ». տես Մլխս. բառ., հ. 2, էջ 344): Սրանից է ոսկեծղի թռչկեթև, ոսկերազուկ» (նույն տեղում, հ. 3, էջ 568):

«Բրածանել. ճյուղ» իմաստներն ունեցող արմատից մարմնի այս կամ այն անդամի (գոտք, թև ևն) անվան կաղմումը միայն հայերենին չի եղել հատուկ: Հմմտ.

Լատ. brachium «1. բազուկ. թև. 2. ոտ, ճյուղ»>իտ. branca «1. անասունի թաթ. 2. ճյուղ, ոտ»:

Հնչյունական տեսակետից, բացի ծիլ բառի ձայնդարձներից, հմմտ. շիլ || շիդ || շեդ || շիւդ || շիւ⁵:

17. ՅՈՂ կամ ՅՈՂ կամ ՅՈՂՈՒՆ. Բառս հիմնականում նշանակում է թուլյալի ծղոտ. Վն. ցոդ «1. ցողուն. 2. ծղոտի վրայի հանգույցները» (հ. 6, էջ 1103—1104):

Միլ, նիւդ (և նիւ) բառերի օրինակի հիման վրա կարելի է այս բառը կապել բուն հայկական ցել (հնդեվր. sk¹el- || sqel-) արմատի հետ, որը նշանակում է ճեղք, պատռվածք» (որից՝ ցելել ճեղքել, պատռել): Արմատիս զուգահեռ ձևերն են. ցուլալ (ցելուլ) «փայլատակել» (Աճառյանն այս հա-

¹ Տես Պր. Հր. Անառյան, Հայոց լեզվի պատմ., հատ. 1, Երևան, 1940, էջ 182, 213:

² Հր. Անառյան, Քննություն Հմշ. բրբ., էջ 262:

³ Հր. Անառյան, Քննություն Ատտ. բրբ., Երևան, 1953, էջ 193 և 194:

⁴ Գլո. բառ., էջ 716:

⁵ Արմ. բառ., հատ. 5, էջ 353:

մարում է ճնոր (պատկերավորություն), ցեղ ժազգատոհմ, սեռ, տոհմ (որից ցեղիլ ժսերիլ, ածիլ):

Այս արմատի բուն նշանակությունը «բաժանմունք» է. հմատ. երկ-ցեղ ճերկիեղի, պառակտված» (հ. 6, էջ 1056—1057, 1059):

Իմաստի զարգացման համար հմատ. ցեղեցուլ ճրուսնել, հառաջ դալ» (էջ 1059), ծիլ բառից՝ Սչ. բրբ. անց ցողուն», հմչ., Պարտիզակի բրբ. ծեղ ճեգիպտացորենի ցողուն» (հ. 3, էջ 768—769):

Ինչ վերաբերում է հարցի հնչյունական կողմին, ապա հայերենի հնագույն վիճակում ե > ո (և հակառակ) հնչյունափոխությունն օրինաչափական էր հմատ.

Յել—ցուլ || Երե. ցող ժարեգակի ճառագայթ¹:

Լես, լեսուլ ժմանրել, փշրել, փռչի դարձնել» > Ակն. լոսել ժմանրել, փշրել²: Եվ այլն.

18. ԴԱՌԵԱԼ: Բառի իմաստն է լծված, խայթված: Նրա տակ Աճառյանը բերում է Ղրբ., Երե. բրբ. դառած ճկատաղած» (արջ, շուն ևն)³, բայց միաժամանակ վերապահում է անում. վերջինս ստակայն դառնալ բայի մի նոր իմաստն է ներկայացնում» (հ. 2, էջ 413):

Քննությունը ցույց է տալիս, որ ոչ միայն Ղրբ., Երե. բրբ. դառած բառը, այլև վերոհիշյալ դառնալ բառը ներկայացնում է բուն հայկական դարձ || դառնալ (հնգելիք. dhrg¹h- || dhreg¹h) բայի մի նոր իմաստը, փոխաբերական մի արտահայտություն: Այստեղ զգացվում է դառնալ բայի «(բարոյապես) շեղվել» նշանակությունը (հմատ. բրբ. դարձվոր ճ1. չեչոտ. 2. տգեղ, այլանդակ բարքով):

Իմաստի զարգացման համար հմատ.

Նա խայթվածի պես վեր բռավ || Նա կատաղածի պես վեր բռավ (պատճառի անունը՝ հետևանքին):

19. ԱՊԱՀՈՎ: Նշանակում է ճհանդիստ: ՆՀԲ այս բառն ստուգարանում է իրրե ճալ. այսինքն հեռի՝ յահէ կամ ի հովէ՝ այսինքն՝ ի հողմոյ: Առաջին ձևով է մեկնում նաև Մենևիշյանը:

Սրանց մեջ ճիշտ կոհանման այն է, որ ապահով բառն իրոք ածանցավոր է և կազմված է ապա- նախածանցով: Բայց սխալ է բառս կապել ահ-ի կամ ճհողմ» իմաստով արմատի (հով) հետ: Եվ ճիշտ է վարվել Աճառյանի, զրանք մեջբերելով իրրե անհավաստի ստուգարանություններ:

Մեր կարծիքով, բառիս հով արմատը պետք է համարել բուն հայկական հոգ բառի ձայնդարձը, որով և այն կապել հնգելիք. pouo- ժիչել» արմատի հետ: Սրանից հետևում է, որ երբեմնի եղել է հոգ արմատին զուգահեռ հոգ հով ձև միևնույն՝ ճցավ, մտատանջություն, տրտմություն, խնամք և այլն» իմաստով, և որ ապահով ստուգարանորեն նշանակում է ճոգսից՝ յիշից՝ մտատանջությունից ազատ: Ապահով բառի այժմյան իմաստի մեջ էլ պարզորոշ կերպով նկատելի է արմատի նշանակության ժխտման երանդը. «վախից՝ երկյուղից ազատ, վտանգից զերծ»:

¹ Գվո. բառ., էջ 1059:

² Արմ. բառ., հատ. 3, էջ 195—197:

³ Մղր. դեռնիլ ճ1. դառնալ. 2. նոր իմաստը՝ կատաղել. դեռած ԵՈՆ «կատաղած շուն» («Մեղրու բարբառը», էջ 259, 266):

⁴ Տես Արմ. բառ., հատ. 1, էջ 423:

Իմաստի զարգացման համար հմմտ.

Հատ. cūga «հոգս» — securus (se-cūrus) «անհոգ, ապահով, անխոռով, հանգիստ»:

Հուն. σφαλερός «1. սխալ. 2. փխր. անհուսալի, վտանգավոր, անապահով» — ασφαλής (α-σφαλής) «1. ապահով, անվտանգ. 2. հուսալի, հաստատուն, կայուն»:

Ռուս. печься «վշտանալ, մտահոգվել, հոգալ, անհանգստանալ, հոգս քաշել, փութաժան լինել», попечение «հոգս, խնամք» — обеспечить (о-без-печ-ить) «ապահովել» (բառացի՝ «անհոգ դարձնել, հոգսադերժ անել»)¹:

Փերմ. Sorge (sur) կամ Fursorge «հոգատարություն, անհանգստություն, հոգս, խնամք» — Versorgung «ապահովում», versorgen «ապահովել» (ver- ժխտական ածանցք և Sorge):

Եվ առհասարակ համապատասխան կապակցությունների մեջ Անհոգ եղիր (կաց) արտահայտությունն իմաստով հաճախ համանիշ է Ապահով եղիր արտահայտության:

Հնչյունական տեսակետից հմմտ.

Ոգի, հոգի || հով, հե. կոգի || կով. արեգ || արև և այլն:

Մի դիտողություն ևս:

Զարմանալի է, թե ինչու է Աճառյանը հեշտալաշտակ «կամավոր ծառա» (որից՝ հեշտալաշտակութիւն) բառը գնում իբրև ծագումով անհայտ, երբ ինքը և՛ նախորդ էջում, հեշտ բառի տակ, և՛ հենց նույն բառի կապակցությամբ իր դիտողություններում տալիս է բառի սպառիչ ստուգաբանությունը. այն կազմված է հեշտ «հաճելի» և պաշտակ «ծառա, սպասավոր» բառերից (վերջինս դալիս է պաշտ-ել «ծառայել, սպասավորել ևն» բայից): Նրան կից կան նաև հեշտ պաշտօն (որը համանիշ է հեշտալաշտակութիւն բառին), հեշտալատշօնեայ²:

Այսպիսով՝ հեշտալաշտակ բառի առաջ պետք է գնել «—» նշանը (որը ընդունված է Աճառյանի կողմից) և նրա տակ՝ հիշատակել, որ բարդ բառ է՝ վերոհիշյալ կազմությամբ:

¹ Ռուս. *печ- «հոգս» չի՝ հանգում արդյոք հնդեվրոպական վերոհիշյալ արմատին:

² Տես Սրբ. բառ., հատ. 4, էջ 255—257: